ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-24/22 ծածկագրով էլեկտրոնային աճուրդով առանց շարժիչի հեծանիվների գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի Հայտերի բացման նիստը տեղի ունեցավ 04.01.2024թ. ժամը 15:00-ին էլեկտրոնային գնումների e-auctions համակարգի միջոցով:

Գնահատող հանձնաժողովի կազմը.

Հանձնաժողովի նախագահ՝ Դավիթ Բաղումյան
Հանձնաժողովի անդամ՝ Սերգեյ Աբրահամյան
Գարեգին Խլղաթյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Արսեն Սողոմոնյան

1. Տեղեկատվություն օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի հիմնավորումների մասին.

1.1 Ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումներ չեն ներկայացվել:

2. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.

2.1 Ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Մասնակիցների անվանումները	Էլ. Հասցեները
1	«ՖՈՒԴ ՄՈՒԴ» ՍՊԸ	foodmood1@yandex.com
2	«Էյչ Գրուպ» ՍՊԸ	eychgroup@gmail.com
3	«ԷԼ ԸՆԴ ԷՎ» ՍՊԸ	HaykLV@yandex.ru

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.

3.1 Ընթացակարգով կայացած հակադարձ աճուրդի արդյունքում մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները.

Հ/Հ	Նախահաշվային գինը, ՀՀ դրամ	Մասնակիցների անվանումները					
		«ՖՈՒԴ ՄՈՒԴ» ՍՊԸ		«Էյչ Գրուպ» ՍՊԸ		«ԷԼ ԸՆԴ ԷՎ» ՍՊԸ	
		Վերջնական առաջարկված գինը, ՀՀ դրամ					
		Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ-ն	Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ-ն	Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ-ն
1	883350000	728731575	874477890	736092500	883311000	5000000000	6000000000*

*Մասնակցի գնային առաջարկը գերազանցում է նախահաշվային գինը:

4. Գնահատման գործընթացի կասեցման մասին.

4.1 Մասնակցի ներկայացրած փաստաթղթերի առկայության և դրանց սահմանված պայմաններին համապատասխանության գնահատման արդյունքների արձանագրման նպատակով կասեցնել նիստը և շարունակել այն հանձնաժողովի կողմից փաստաթղթերը հրավերով սահմանված ժամկետում ուսումնասիրելուց հետո, բայց ոչ ուշ, քան սույն ընթացակարգի հրավերի 8.9 կետով սահմանված ժամկետում, ՀՀ կրթության,գիտության,մշակույթի և սպորտի նախարարություն Վազգեն Սարգսյան 3,Կառավարական տուն 2, 6-րդ հարկ, 609 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 09.01.2024թ. ժամը 15:00-ին

5. Հակադարձ աճուրդի արդյունքում համակարգի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և դրանց սահմանված պայմաններին համապատասխանության մասին.

5.1 **«ՖՈՒԴ ՄՈՒԴ» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված հայտում բացակայում է հայտի ապահովումը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

6. Տվյալներ առաջին տեղ զբաղեցրած, այդպիսին չճանաչված և մերժված մասնակիցների վերաբերյալ.

6.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետը՝ մերժել **«ՖՈՒԴ ՄՈՒԴ» ՍՊԸ**-ի հայտը՝ հրավերի պայմաններին չհամապատասխանելու հիմնավորմամբ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

6.2 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 18.05.2017թ թիվ 534-Ն որոշմամբ հաստատված կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետը՝ մերժել «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ի հայտը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

6.3 **«ԷԼ ԸՆԴ ԷՎ» ՍՊԸ**-ի հայտը մերժվել է համակագի կողմից՝ գնային առաջարկը նախահաշվային գինը գերազանցելու հիմքով:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

7. Գնահատման արդյունքների մասին

7.1 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը՝ գնման գործընթացը հայտարարել չկայացած, պայմանագիր չի կնքվում հիմնավորմամբ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

7.2 Հրապարակել գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարությունը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն անգործության ժամկետ սահմանել հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

---------- Դավիթ Բաղումյան

---------- Սերգեյ Աբրահամյան

---------- Գարեգին Խլղաթյան

---------- Արսեն Սողոմոնյան /քարտուղար/